# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

***Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր՝ 3.1-10/ համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար «Համայնքային ծառայության մասինե ՀՀ օրենքի 14-րդ հոդված***

Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքային համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի թափուր պաշտոն զբաղեցնելու համար (ծածկագիր 3.1-10)

1.Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետը
(ծածկագիր 3.1-10)

-Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է համայնքային ենթակայության մասնագիտացված դպրոցներում մանկապարտեզներում, ակումբներում, մշակույթի տներում գրադարաններում կրթական և մշակույթային այլ կազմակերպություններում անցկացվող միջոցառումներին.

- մշակում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում համայնքի կրթական –մշակույթային միջոցառումների ծրագրեր

- մասնակցում է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրրերի հետ կապված միջոցառումների կազմակերպմանը, համայնքային նշանակության կրթական, մշակույթային և այլ միջոցառումներին.

– Պատասխանտվություն է կրում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները, աշխատակազմի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) միջնակարգ կրթություն, Հայաստանի Հանրապետության սահմանադրության «Համայնքային ծառայության մասինե, «Տեղական ինքնակառավարման մասինե , ‘Կրթության և գիտության մասին’, ‘Հանրային ծառայության մասին’, Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

բ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը

գ)ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Մրցույթը կկայանա 2016թ. ապրիլի 27-ին ժամը 11:00 –ին Մեծամորի համայնքապետարանի շենքում:

Փաստաթղթերի ներկայացման վերջին ժամկետն է 2016 թվականի ապրիլի 7-ը:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մեծամորի համայնքապետարան կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

գդիմում մրցույթային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս)

գ տվյալ պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակների հետ միասին:

գ արական սեռի անձինք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին.

գ մեկ լուսանկար 3x4 սմ չափի

գ անձնագրի պատճենը

Փաստաթղթերը ընդունում է Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմը կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակզմը :

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, համայնքապետարանի շենք
Հեռ. 0237/34441, Էլ. փոստ՝ metsamormeria@yandex.ru
Հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Աբովյան 71
Հեռ.՝ 0237 /20770, 27649/
Ժամը 9:00-ից մինչև 17:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: